Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Գյումրու թիվ 43 հիմնական դպրոց » ՊՈԱԿ

Առարկա՝ Շախմատ

Թեմա՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը շախմատ առարկայի դասավանդման ընթացքում

Վերապատրաստող, մենթոր՝ Վարժապետյան Դավիթ

Ուսուցիչ՝ Վարդանյան Արմեն

2022թ.

Բովանդակություն

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ…….3

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ……...5

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ……..…...7

4.ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ…….10

5.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ……..13

6. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…….17

7.ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...18

ԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեր երկրում աշակերտական արժեքային համակարգի ձևավորումը ներառված է ՀՀ պետական չափորոշչում՝ որպես հենց կրթության բովանդակային բաղադրիչ: Յուրաքանչյուր ուսումնական առարկայի մասով սովորողների պատրաստվածությունը ներկայացվող գիտելիքային պահանջների մեջ առանձին կետով նաև նշվում է արժեքները և դրանց ձևավորումը, որոնք պետք է տա դպրոցը: <<Արժեհամակարգ>> հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական , գեղագիտական, հոգևոր, իմացական , մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումն աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն:

Թեման համարվում է արդիական, անցնելով հասարակության արմատական փոփոխությունների բարդ շրջանի միջով, ազդելով կրտսեր սերնդի մտածելակերպի , գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Կրտսեր սերունդն իր վերափոխվելու սկիզբը, նոր ժամանակի պահանջներին համապատասխան,դնում է տարրական դասարաններից: Նա սկսում է դառնալ գործընթացների մասնակիցն ու այդ արժեքների ժառանգորդը, կրողը: Նրա առջև խնդիր է առաջանում կարողությունները զարգացնելու և իրացնելու համար: Կրթական համակարգի արմատական վերակառուցման պահանջը առաջացավ երկրի անկախացումից հետո : Փոխվեցին արժեքները, արժեքային կողմնորոշումները:

Այժմ կրթությունն համարվում է այնպիսի գործոն, որը արժևորում է մարդու դերը հասարակության մեջ՝ զարգացնելով այնպիսի արժեքավոր որակներ, ինչպիսիք են համակցությունը, հանդուրժողականությունը, ներողամտությունը, համագործակցությունը:

Կրթության բովանդակության, միջավայրի արդիականացման համար անհրաժեշտություն է առաջանում ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայման և կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

2. ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Բազմաթիվ մանկավարժներ, հոգեբաններ, հետազոտական, կրտսեր աշակերտների կրթության և դաստիարակության արդյունավետության խնդիրը պահել են իրենց ուշադրության կենտրոնում Ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Գյոլին, հավատում է, որ կրթությունը, ապրելակերպ է և ոչ թե ապրելու նախապատրաստություն: Ինչպես Սոկրատեսը՝ իր սաներին էր սովորեցնում մտածել տրամաբանորեն և վերլուծելով, այնպես էլ, այժմ մենք, շախմատի ուսուցիչներս մեր սաներին սովորեցնում ենք տրամաբանորեն և վերլուծելով մտածել: Վենեսուլլայում անցկացված հետազոտության արդյունքները ցույց են տվել , որ 4 ամիս շախմատով զբաղված երեխաները բարելավել են իրենց ինտելեկտը : 2003 թվականին այս եզրակացությանն է եկել նաև գիտությունների դոկտոր Մուրեյ Թոմփսոնը: Իր հետազոտության ժամանակ այն մասնակիցները, ովքեր շախմատ էին խաղում, ցույց են տվել ինտելեկտի ավելի բարձր մակարդակ; Թոմփսոնը սա վերագրում է կենտրոնացվածությանը և տրամաբանական մտածողությանը, ինչը զարգացնում է շախմատը:

Շախմատը զարգացնում է թվաբանական ունակությունները: 1998 թվականին <Շախմատի ուսուցման ազդեցությունը մաթեմատիկական ձեռքբերումների վրա> վերնագրով ուսումնասիրություն անցկացվեց՝ Ջեյմս Սմիթի և Ռոբերտ և Քեյջի կողմից; Նրանք ցույց տվեցին, որ շախմատը շատ կարևոր է երեխայի մաթեմատիկակա ընդունակությունների բարելավման համար; Փորձարկվողները ամերիկական և աֆրիկական ավազ դպրոցների աշակերտներ էին, ում 120 ժամ շախմատ ուսուցանվեց; Այնուհետև անցկացված մաթեմատիկայի թեստի արդյունքները ավելի բարձր էին այս երեխաների մոտ, քան նրանց, ովքեր չէին մասնակցել հետազոտությանը; Ֆոկտոր էրիկ Ֆոտիյեբը կարծում է, որ մի քանի քայլ նախապես մտածելու ունակությունը գլխավոր գրավականն է, ինչի շնորհիվ շախմատիստներն ուժեր են լինում մաթեմատիկայից;

Շախմատը զարգացնում է վերբալ կարողությունները:

1973-1974 թվականներին Ալբերտ Ֆրանկը՝դպրոցի տնօրեն Զահիրում, ուսումնասիրեց շախմատի ազդեցությունը այն երեխաների վրա, ովքեր ամեն շաբաթ 2 ժամ շախմատի պարապմունք ունեին; Իր ուսումնասիրությունը, որը ներառված է <<Շախմատ և ընդունակություն>> գրքի մեջ, ցույց տվեց բացառիկ արդյունք; Շախմատի պարապմունքներից հետո նա հանգեց այն եզրակացությանը, որ շախմատի պարապմունքներին մասնակցած երեխաները բարելավել և իրենց վերբալ, ինչպես նաև, մաթեմատիկական և ադմինիստրատիվ ունակութունները; Ինչպես է շախմատը բարելավում վերբալ ունակությունները' շախմատային խաղի ժամանակ խոսքային հաղորդակցության բացակայության պարագայում. Ֆրենկը հավատում է, որ շախմատը բարելավում է խոսքային ունակությունները, քանի որ խաղալու ժամանակ օգտագործվում են մարդու անհատական հնարավորությունները և շատ մտավոր ունակություններ;

Շախմատը զարգացնում է քննադատական մտածողությունը: 1995 թվականի իր <<Շախմատը կրթության մեջ>> հետազոտության մեջ դոկտոր Ռոբերտ Ֆերգյուսոնը հաստատել է, որ շախմատը շատ կարևոր է երեխայի քննադատական և վերլուծական հմտությունների զարգացման համար: Արդյունքում Ֆերգյուսոնի հետազոտության մասնակիցները, ովքեր 7-9-րդ դասարանցիներ էին, 17% բարելավված արդյունք ցույց տվեցին:

Շախմատը հարստացնում է զգացմունքային ինտելեկտը, սոցիալ-հոգեբանական կարողությունները:

Զգացմունքային ինտելեկտը, մարդու զգացմունքները ընկալելու, դեկավարելու, գնահաաելու կարողությունն է: Ըստ դոկտոր քիոզ Մարի Ստաֆսի շախմատն օգնում է համախմբել տարբեր մարդկանց անկախ ռասայից ու սոցիալ կարգավիճակից, ինչի արդյունքում էլ շախմատը զարգացնում է զգացմունքային ինտելեկտը և սոցիալ-հոգեբանական հմտությունները:

3. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում, ինչպես տեսանք ներածական մասում, կախված է մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախմբից:

Անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար, արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին առաջնայնություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին: Արժեհամակարգը համեմատաբար զորեղ կլինի, ավարտուն, եթե, բոլոր համախմբերը ներդաշնակորեն համագործակցեն: Լիարժեք, ներդաշնակ համագործակցումը, գրեթե, անհնարին է, ուստի «արժեհամակարգ» հասկացությունը որոշակիորեն ստույգ չի կարող լինել:

Կրասեր աշակերտները, իրենց տարիքային և անհատական առանձհահատկություն-ներին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ' յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Ուսուցիչն ուսուցման գործընթացն այնպես պետք է անցկացնի, որ դառնա աշակերտների հերոսը, ընկերը, հարազատ անձնավորություն;

Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, ընտանիքը և սոցիալական միջավայրը:

Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները, բնականաբար, լուծվում են ոչ միայն ընտանիքում, այլ, նաև ուսումնական հաստատություններում, ուսումնադաստիա-րակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը ձևավորել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ: Նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ, ուսումնական գործընթացի

արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը հուսմագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացի կազմակերպումը արդյունավետ կլինի, եթե դասարանում տիրի հոգեբանական աջակցության մթնոլորտ: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Կիրառելով ուսուցման կազմակերպման տարբեր ձևեր (անհատական, խմբային, արտադասարանական միջոցառումներ և այլն) ուսուցիչը արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների մտավոր պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: Հոգեբանները շախմատն անվանում են հիշողության գործառույթը բարեյավելու աշխատող տարբերակ: Այն հնարավորություն է տալիս լուծել համկարգային խնդիրները. և զարմանալի չէ, որ շախմատը խորհուրդ է տրվում Այցհայմերի հիվանդության ժամանակ: Շախմատը բարելավում է մարդու ինտելեկտը:

Շախմատը բարելավվում է երեխաների ուսման առաջադիմությունը, ինչպես նաև, թողնում է մի շարք դրական ազդեցություններ:

Տարբեր ոլորտներում կատարված հետազոտությունները ցույց են տվել , որ շախմատը թ՛ե մեծերի , թ՛ե փոքրերի մոտ բարելավում է մի շարք իմացական գործընթացներ: Շախմատը նպաստում է երեխաների ուղղի զարգացմանը: Ապացուցվել է, որ շախմատը բարելավում է երեխաների վերլուծական և քննադատական մտածողությունը, տեսանելիությունը հատկապես՝ երկրորդ և երրորդ դասարանցիների մոտ , ինչը նպաստում է այս տարիքային խմբի երեխաների արագ մտավոր զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔ

Կրթական խնդիրներով զբաղված մասնագետները պետք է ճշտացույն տեսքով որոշեին և ամրացնեին արդի ժամանակաշրջանի քաղաքացուն անհրաժեշտ արժեքները: Իսկ ինչպե՞ս որոշեն այդ արժեքները, որո՞նք են դրանք, ին՞չ մեխանիզմներով հասցվեն սովորողին: Այս և նմանօրինակ հարցերը քննարկվում էին, դառնում վերլուծության նյութ: Այդ փոփոխությունների ժամանակ երիտասարդ սերունդը դժվարանում էր ձևավորել արժեքային կողմնորոշումներ:

Երեխայի' դպրոցին պատրաստվածությունը գնահատվում է հիմնախնդիրների 4 խմբի չափանիշներով սոցիալական, ֆիզիկական, հուզակամային և իմացական:

Դառնալով աշակերտ, երեխան ուսուցման սկզբում ունենում է սոցիալական իրադրության զարգացման արմատական փոփոխություն: Նա պետք է շփվի իր հասակակիցների հետ, իր վարքը ենթարկի խմբի կանոններին, ստանձնի աշակերտի դեր:

Կրտսեր դպրոցական տարիքում (6-7) տեղի է ունենում երեխայի ֆիզիկական և հոգեֆիզիոլոգիական զարգացումը: Ֆիզիկական ոլորտն ընդհանուր առողջությունն է, ֆիզիկական զարգացումը, քաշը, հասակը, մկանային տոնուսը, տեսողության, լսողության, մատների զարգացվածության աստիճանի համապատասխանությունը 6-7 տարեկան երեխաների ֆիզիկական զարգացվածության պահանջներին:

Հուզակամային ոլորտը անմիջական ցանկությունները սեփական կամքին ենթարկելու կարողությունն է: Նրանք պետք է ժամանակին դպրոց գան, նստեն դասարանում, առաջադրանքներ կատարեն: Նրանք հեշտությամբ են շեղվում, ունակ չեն երկար կենտրոնանալու, գրգռվող են, զգացմունքային (6-7):

Իմացական ոլորտը ներառում է ընկալում, ուշադրություն, հիշողություն, երևակայություն, մտածողություն, նրբաշարժումների զարգացվածության աստիճան, սեփական ես-ի գիտակցում:

Կրթության բարեփոխումների արդի փուլում առանձնահատուկ նշանակություն է ստանում կրթության որակի աճին միտված գործընթացների ապահովումը բոլոր ուղղություններով: Հոգեբանամանկավարժական և մեթոդական մշակումների համադրումները <<Շախմատ>> առարկայի բովանդակության, կրթության ժամանակակից տեխնոլոգիների հետ նոր հնարավորություններ են ստեղծում ամբողջական համակարգված ուսուցման համար:

Համակարգված ուսուցումը բարձր պահանջներ է առաջադրում երեխայի մտավոր աշխատունակությանը , որը կրտսեր դպրոցականի մոտ կայուն չէ, ցածր է հոգնածության մոտ դիմադրությունը: Տարիքի հետ զուգընթաց այդ չափանիշները բարձրանում են : Կրտսեր դպրոցական տարիքը ինտենսիվ զարգացման և ճանաչողական գործընթացների որակական վերակառուցման շրջանն է , երեխաների զարգացման լայն հնարավորություններով: Որքան շատ դրական ձեռքբերումներ ունենա կրտսեր դպրոցականը, այնքան հեշտ կհաղթահարի դեռահասության դժվարությունները: Ըստ էության, կրտսեր դպրոցականի ձեռք բերած գիտելիքները մնում են ողջ կյանքի ընթացքում :

2011 թվականից սկսած՝ <<Շախմատ>> առարկայի մուտքը հանրակրթության ոլորտ նոր և առաջադեմ քայլ էր գրեթե բոլոր տեսանկյուններից: Այսօր արդեն վստահաբար կարելի է խոսել <<Շախմատ>> առարկայի իմացական , հուզական և վարքային ներուժի մասին , թե որքանով է առարկայի դասավանդումը նպաստում կրտսեր դպրոցականի մտավոր և անձնային որակների զարգացման վրա՝ տրամաբանական, պատկերային մտածողության և երևակայության դրսևորմամբ:

Հետազոտության հիմնական նպատակն է ներկայացնել և ուսումնասիրել հանրակրթական դպրոցներում արժեքային համակարգի ձևավորումը կրտսեր դպրոցականների մոտ: Առաջադրված նպատակին հասնելու համար աշխատանքում առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

ա)Վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ մասնագիտական գրականություն:

բ)Պարզաբանել արժեքային համակարգի դերը դասաժամերին:

գ)Լուսաբանել արժեքային համակարգի ձևավորման գործընթացը և յուրացումը:

դ) Ընտրել հետազոտության օբյեկտ:

Հետազոտության օբյեկտ է հանդիսացել դասարանը, որտեղ կատարել եմ փերձարարական դասապրոցես: Կիրառել եմ դիտարկում և վերլուծություն մեթոդները:

Ուսուցման նպատակներից մեկը զարգանալն է, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Գործունեության ընթացքում են զարգտանում խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը՝ ինքնուրույն իմացական գործունեությունը, շահագրգռվածությունը ցանկացած խնդիր վերլուծելու և հանգուցալուծելու համար:

Սակայան, որքան էլ մասնագետները առաջարկեն մեթոդներ կամ ռազմավարություններ, ուսումնասիրության արդյունավետության խնդիրը մնում է անլուծելի կամ կիսով չափ լուծված: ՈՒսուցչի համար խնդիրը մնում է խնդիր, թե ինչպես կիրառվի կամ օգտագործվի լուծման գործիքը, արդյոք դասի մոդելը կօգնի հասնել խնդրի առավելագույնս լուծմանը: ՈՒստի յուրաքանչյուր ուսուցիչ գտնում է իր առարկային համապատասխանող ռազմավարություն և տալիս է առաջացած խնդրի լուծումը:

5.ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍԵՐ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

2022թ. հոկտեմբերին անց եմ կացրել երկու փորձարարական դաս 4բ-րդ դասարանում: Դասերի ընտրված թեման էր <<Ծանրաբեռնված խաղաքար>> : Խնդիրը, ըստ դասարանների , տարբերվում են իրենց բարդությամբ, լուծման եղանակներով, սկզբունքներով, բացատրություններով: Սակայն, երկու դասարաններում էլ թեմայի վերաբերյալ խնդիրների լուծումը պտտվում է նույն առանցքի շուրջ, այսինքն, երկու դեպքում էլ հիմքը մատային դիրք ստեղծելու գաղափարն է՝ շախմատ խաղի գլխավոր նպատակը: Դրան հասնելու համար, անհրաժեշտ է մտածել տրամաբանորեն , պատկերացնելով, թե երբ է արքան ընկնում մատային ցանցի մեջ: Խաղի իմաստը կայանում է նրանում, որ աշակերտները կարողանան արագ կողմնորոշվել: 4-րդ դասարանի աշակերտներին բաժանել եմ երկու խմբի , մի խմբում ընդգրկել եմ բարձր առաջադիմությամբ աշակերտների, մյուս խմբում ՝ ցածր առաջադիմությամբ աշակերտների: Ցածր առաջադիմությամբ հագեցված աշակերտների խումբը , իր ակտիությամբ ու խաղի կանոնները ընկալելու և կատարելու տեսանկյունից չի զիջել մյուս խմբին և պայքարը ավարտվել է շախմատային ոչ-ոքիով: Չորրորդ դասարնցիների պահվածքը, վարվելաձևը,խաղի կանոնները պահպանելը, ավելի ընդգծված էր , պտասխանատու կեցվածքով:Այստեղ , երևի թե, տարիքն էր իր խոսքն ասում և այն հանգամանքը , որ նրանց համար 4-րդ դասարանը ավարտական է, շախմատային առումով:

Փորձարարական վերլուծություն

Ուսուցիչ՝ Ա. Վարդանյան

Դասարան 4-րդ	Ուս. տարի 2022-2023
Դասի նպատակ	Ուսուցանել ծանրաբեռնված խաղաքար մարտավարական հնարքը: Զարգացնել աշակերտների հաշվարկային և վերլուծական ունակությունները:Ներկայացնել մարտավարական հնարքների ժամանակ խաղաքարերի համագործակցության կարևորությունը:
Դասի վերջնարդյունքներ	Սովորողը կարողանում է դիրքը գնահատել , տարբերակել խաղաքարերի շարժունակությունը (որ խաղաքարն է ավելի լավ զարգացած) և կարողանում է խոչընդոտ հանդիսանալ հակառակորդի խաղաքարերի համար: Օգտվելով խաղքաքարերի անբարենպաստ դիրքից , երբ մեկ խաղաքարը զբաղված է մինգամից մի քանի դաշտի հսկողությունով, շեղում է ծանրաբեռնված խաղաքարի ուշադրությունը, զոհաբերում խաղաքարը և հասնում ցանկալի արդյունքի:
Մեթոդներիկ մանրաման նկարագրություն	Պատմողական, ուղղորդող հարցերի միջոցով : Օգտագործելով համատեղ խմբային մտագրոհ մեթոդը: Դասարանը բաժանում ենք ըստ շարքեր 3 խմբի: Համարակալում ենք խմբերը ըստ շարքերի՝ I, II, III խմբեր: Ստեղծում ենք ոգեշնչող , անկաշկանդ միջավայր երեխաների համար: Ցուցադրական խաղատախտակին շարված է դիրք ծանրաբեռնված խաղաքար թեմայից: Խմբերին հանձնարարվում է՝ 1. Գնահատել դիրքը 2.Գտնել սպիտակների ակտիվ խաղաքարերը: 3.Գնահատում ենք սևերի խաղաքարերի դասավորությունը և դիրքային թուլությունները: 4.10 րոպե քննարկում: Ակնկալվող ճիշտ պատասխանն է՝ I տարբերակ 1. Նc8 –Փc8 2.Նe8+# II տարբերակ 1.Նc8-փe8 2.Նe8+# Վերն նշված 4 կետերի պատասխանը՝ խմբերի

	ավագների կողմից ժամանակին ստանալուց հետո կատարվում է դիրքի վերլուծություն՝ ուսուցչի գլխավորությամբ:
Միջառարկայական կապեր	Ծանաբեռնված խաղաքարի օրինակով միջառարկայական կապ տանել մաթեմաթիկայի հետ: Օրինակ եթե մաթեմաթիկայում գումարելիների տեղերը փոխելիս գումարը չի փոխվում՝ ապա, շախմատում գումարը փոխվում է: 1.Նc8+ - Փc8 2 Նc8+# (մատ է) 2.Նe8+ - Փe8 2 Նc8(մատ չէ)
Անհրաժեշտ նյութեր , տեխնիկական միջոցներ, ՏՀՏ	Ցուցատախտակ, գիրք, տետր, lichess.org. learningapps.com
Ձևավորող արժեհամակարգեր	Այսօր արդեն վստահաբար կարելի է խոսել <<Շախմատ>> առարկայի իմացական, հուզական և վարքային ներուժի մասին, թե որքանքվ է առարկայի դասավանդումը նպաստում կրտսեր դպրոցականի մտավոր և անձնային որակների զարգացման վրա՝ տրամաբանական, պատկերային մտածողություն և երևակայության դրսևորմամբ: Շախմատի միջոցով բացառիկ հնարավորություններ են ընձեռնվում կայունացնելու երեխաներ ուշադրությունը՝ ճանաչողական և հուզական ոլորտներում: Արդար և ազնիվ խաղը՝ անձնային որակների ձևավորման հիմք է դառնում երեխաների վարքի բոլոր դրսևորումներում:
Տարբերակված ուսուցման համար առաջադրանքներ	Ըստ կարողությունների ԱՈՒՊ-ով երեխանեչի համար կան բազմաթիվ մուլտհերոսներով պատկերներ , ծանրաբեռնված խաղաքարի մասին ավելի հանգամանալից կարծիք կազմելու համար: Օրինակ՝ տե՛ս ՏՀՏ-ում:

Միավորային և ձևավորող գնահատական	Ձևավորող կամ միավորային գնահատում ըստ խմբերի (տե՛ս մեթեդների մանրամասն նկարագրում) ; Խմբային աշխատանքի ժամանակ երեխաներին նախապես բաժանվում է կանոնակարգ խաղի վերաբերյալ , որի միջոցով կատարվում է ձևավորող գնահատականը: Օրինակ՝ 1.Ամենաարագ 2 .Համխմբված 3.համագործակցող 4.կանոններին հետևող լավագույն թիմը: Հարց ու պատասխանի միջոցով կարելի է թիմի անդամներին առանձին-առանձին գնահատել միավորային սանդղակով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Շախմատի միջոցով բացառիկ հնարավորություններ են ընձեռնվում կայունացնելու երեխաների ուշադրությունը ճանաչողական ու հուզական ոլորտներում: Այն պետք է դառնա կրթության զենքը և գլխավոր իմաստը : Կրտսեր աշակերտների արժեքային համակարգի ձևավորումը , կապված <<Շախմատ>> առարկայի հետ , կրելի է բացատրել, նաև մի քանի հանգամանքներով, հայոց գրերն ու շախմատը ստեղծվել են նույն դարում : Հայաստանը լինելով փոքրիկ երկիր , համարվում է շախմատային գերհզոր տերություն աշխարհում:ՈՒնեցել ենք երկու հայազգի շախմատի աշխարհի չեմպիոններ:Մենք դասավանդում ենք շախմատը որպես առարկա : Այն , իր մեջ ներառելով սպորտ, արվեստ և գիտություն , կրտսեր աշակերտների արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելով սովորեցնում է պայքարել և գտնել ծանր իրավիճակներից դուրս գալու արահետները: Շախմատը ուսուցանում է, ռազմական դաշտում , մարտ վարելու , պաշտպանվելու, գրոհելու , հակագրոհելու հմտություններ: Ազնիվ խաղը ՝ անձնային որակների ձևավորման հիք է դառնում, ինչը գործնականում տեսանելի է երեխաների վարքի բոլոր դրսևորումներում: Պատասխանատվության զգացում դեռևս կրտսեր դպրոցական տարիքում : Արդար և հավասար պայմաններում ընթացող խաղում՝ ուսուցչի կողմից վստահված մի ամբողջ <<թագավորություն>> , արքա, որտեղ հաղթանակի պատասխանատվությունը, լիովին ընկնում է փոքրիկ հերոսի <<ուսերին>> : Պարտավոր ես խաղալ ձեռքի տված խաղաքարով, և պատվով դուրս գալ ստեղծված իրավիճակից : Ստեղծված հավասար արդար պայմաններում, երբ ամեն ինչ <<կոմպենսացվում է >> է, և չունես ոչ մի պահանջ, մնում է հուսալ միայն լավագույնը: Կայացնել որոշում , քո կատարած յուրաքանչյուր քայլի և արարքների համար : Պատասխանատվություն ուսուցիչների և ընկերների առջև:

Անհատի ձևավորման, վաղվա քաղաքացու բարեկեցությունը սկսվում է վաղ դպրոցական տարիքից և միջավայրից , որի անմիջական կրողն է մեր ուսումնական համակարգը:

7.Օգտագործված գրականության ցանկ

1. Տարրական դպրոցի <<Շախմատ>> առարկայի չափորոշիչները:

2.Հայաստանի շախմատի ակադեմիա <<Շախմատի դասավանդման հոգեբանական ձեռնարկ>> Երևան 2011թվ.: շ

3.Ալբերտ Ֆրանկ <<Շախմատ և ընդունակությունները>> 1973թվ.:

4.Ռոբերտ Ֆերգյուսոն <<Շախմատ կրթության մեջ>> հետազոտություն, 1995թվ.:

5. Հ. Թումանյան << Շախմատ>> 2, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2011թվ.:

6.Հ. Թումանյան <<Շախմատ>> 3, Ուսուցրի ձեռնարկ, Երևան 2012թվ.:

7.Հ.Թումանյան <<Շախմատ>> 4, Ուսուցչի ձեռնարկ, Երևան 2013թվ.:

8.Ս. Միսակյան Մեթոդական ուղեցույց 2-4-րդ դասարանների աշակերտների համար, Երևան 2013թվ.:

9.Ս. Միսակյան, Ուսումնամեթոդաիկան ձեռնարկ 2-4-րդ դասարանների աշակերտների համար , Երևան 2018թվ.:

10. Տիգրան Պետրոսյան <<Շախմատ և ինտուիցիան>> , ռեֆերատ Երևան 1968թվ.: